ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

ՀԱՅ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊՐՈՖ. ՍՏԵԼԼԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ՝ ԿԱՐԴԱՑԱԾ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Զեռքիս է ՀՀ ԳԱԱ և ԵրՊՀ համատեղ ուժերով կազմակերպած ու 2003 թ. սեպտեմբերի 15–20-ը Երևանում անցկացրած «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» խորագիրը կրող միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածուն (Երևան, 2004, 620 էջ):

Ժողովածուի 283–288 էջերում տպագրված է բժշկագիտության դոկտոր, պրոֆեսոր Ստելլա Վարդանյանի «Հայկական բժշկության պատմության ասպարեզում 1832–2002 թթ. կատարված ուսումնասիրությունները և ապագա անելիքները» զեկույցը:

Անժխտելի են պրոֆեսոր Ս. Վարդանյանի նվիրվածությունը և մեծ ավանդը հայ բժշկության պատմության ուսումնասիրության ու արժեքավոր աշխատություններ հեղինակելու գործում: Սակայն ցավալի է, որ գիտնականը բժշկության պատմության բնագավառում 170 տարվա ընթացքում արարված ժառանգությունը ներկայացնելիս առանց հիշատակության է թողել մի շարք կարևոր հրապարակումներ, որոնք ոչ միայն կարող էին հետաքրքրել գիտաժողովի մասնակիցներին, այլև մի յուրատեսակ մատենագիտության դեր կատարել հայ բժշկության պատմությունը ուսումնասիրել ցանկացողների համար:

Մենք լիովին գիտակցում ենք, որ զեկուցման համար հատկացված ժամանակը և ժողովածուի սուղ էջերը հնարավորություն չեն տվել հեղինակին ընդգրկելու նյութի ողջ ծավալը, սակայն այդ դեպքում անհրաժեշտ էր ժամանակագրական վերապահում անել և ո՛չ շրջանցել բազում կարևոր աշխատություններ: Ինչևէ, ստորև ներկայացնում ենք այն աշխատությունների (գուցե դարձյալ ոչ լրիվ) ցանկը, որոնք դուրս են մնացել պրոֆեսոր Ս. Վարդանյանի զեկուցումից: Ի դեպ, ներկայացվող գրականության 33 անուն ընդգրկող ցանկը կազմվել է տողերիս հեղինակի հիմնադրած Հայ բժշկության թանգարանում առկա գրականության հիման վրա, ուստի կունենա լրացնելիք տեղիներ.

1. Ավագյան Ն., Մարգարյան Ե., Թորոսյան Ա., Հայաստանում դատական բժշկության պատմության ակնարկներ, Երևան, 1970, 185 էջ (ռուս.):

2. Բժշկագիտությունը և հայ բժիշկները.– ՀՀ ԱՆ և ԵրԲՀ Հայ բժշկության պատմության հարցերին նվիրված 13-րդ գիտամեթոդական կոնֆերանսի նյութերի ժողովածու, պատ. խմբ. Մ. Մելիք-Փաշայան, Երևան, 1999, 86 էջ:

3. Գրիգորյան Ա., Մելքումյան Բ., Հայաստանի բժիշկները Մեծ Հայքենականում, գիրք առաջին, Երևան, 1983, 376 էջ:

4. Գրիգորյան Ա., Մելքումյան Բ., *Հայաստանի բժիշկները Մեծ Հայրենականում, գիրք երկրորդ, Երևան, 1987, 380 էջ:*

5. Գևորգյան Ի., *Վիրաբուժությունը Խորհրդային Հայաստանում, Երևան, 1973, 134 էջ (ռուս.):*

6. Դավթյան Վ., *Հայերը և ալկոհոլը: Բժշկապատմական և սոցիալ-հոգեբուժական ասպեկտները, Երևան, 1994, 94 էջ:*

7. Թորգոմյան Վ., *Արդի հնդկահայ բժիշկները, Վիեննա, 1896, 30 էջ:*

8. Լալայան Ա., *Հայաստանում Ի. Պավլովի ուսմունքի տարածման պատմությունից, Երևան, 1954, 32 էջ:*

9. Լալայան Ա., *Ռուս-հայկական բժշկական կապերը. XIX դար և XX դարի սկիզբ, դոկտորական ատենախոսություն, գիրք 1–2, Երևան, 1966 (ռուս.):*

10. Խրիմյան Ա., *Առողջապահությունը Սովետական Հայաստանում 30 տարում, Երևան, 1950, 51 էջ:*

11. Կարոյեան Գ., *Մեծ եղեռնի նահատակ հայ բժիշկները (Անոնց պատգամները), Պոսթոն, 1957, 557.էջ:*

12. *Հայ անվանի բժիշկներ, գիրք Ա, գլխ. խմբ. Ա. Շիրինյան, Երևան, 2002, 404 էջ: Գրքում ժամանակագրական կարգով ներկայացված են 180 երևելի հայ բժիշկների համառոտ կենսագրականները՝ շաղկապված հայ բժշկության պատմությանը:*

13. Հայրապետյան Վ., *Էջեր Հայաստանի դեղագործության պատմությունից, Երևան, 1990, 221 էջ:*

14. Հայրիյան Ա., *Հայ բժիշկ - գիտնականներ, Երևան, 1998, 276 էջ:*

15. Հարությունյան Լ., *Հին և միջնադարյան Հայաստանում սննդի և ջրամատակարարման հիգիենայի պատմության որոշ դրվագներ, Երևան, 1971, 88 էջ (ռուս. և հայ.):*

16. Հովհաննիսյան Լուսրա, *Բժշկական դործը, բժշկական հիմնարկները և բժշկական կադրերը Հայաստանում՝ Հայկական մարզի կազմակերպման օրից (1828 թ.) մինչև առաջին իմպերիալիստական պատերազմը (1914 թ.), թեկնածուական ատենախոսություն, Երևան, 1950, 222 էջ:*

17. Հովհաննիսյան Լևոն, *Պատկերազարդում հայ բժշկության պատմության վերաբերյալ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 1958, 66 էջ:*

18. Ղազարյան Վ., *Բժշկական և առողջապահական տարեցույց, Կ. Պոլիս, 1914:*

19. Ճեպեճեան Ռ., *Հայ բժշկութեան պատմութիւնը եւ հայ-արաբ բժշկական գպրոցներու կապերը, Պէյրութ, 1967, 46 էջ:*

20. Մարտիրոսյան Վ., *Հայաստանի բժշկության պատմության թանգարան, Երևան, 2001, 32 էջ:*

21. Մինասյան Հ., *16-19-րդ դարի լեհահայ բժիշկներ, Երևան, 2001 թ., 62 էջ, 54 նկար:*

22. Մինասյան Հ., *100 հայ հոդեբույժներ, Կենսագրական բառարան, գիրք Ա, Երևան, 2002, 224 էջ, 127 նկար:*

23. Մինասյան Ռ., *Հայաստանում մանկաբուժության զարգացման մասին, Երևան, 195 էջ (ռուս.):*

24. Միրաքյան Մ., Հայաստանում դերմատոլոգիայի և վեներոլոգիայի պատմությունից, Երևան, 1988, 222 էջ (ռուս.):

25. Ցազմաջյան Հ., Հոգեբուժական հայացքները Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև 11-րդ դար, դոկտորական ատենախոսություն, Երևան, 1954:

26. Ցարման Ա., Հայերը օսմանյան առողջապահության ծառայության մեջ և Սուրբ Փրկիչ հայկական հիվանդանոցի պատմությունը, Ստամբուլ, 2001, 865 էջ (թուրքերեն):

27. Յուշամատեան 160-ամեայ Սուրբ Փրկիչ Հայոց Հիւանդանոցի, աշխ. Վ. Քէօսէեան, Իսթանպուլ, 1975:

28. Նազարեթյան Է., Գասպարյան Ա., Հայաստանում թերասլիայի կայացումը և զարգացումը, Երևան, 2002, 40 էջ (ռուս.):

29. Նանասյան Ս., Փարսադանյան Ռ., Խրիմլյան Ա., Առողջապահությունը Սովետական Հայաստանում, Երևան, 1961, 104 էջ:

30. Շիկահեր Վ., Կիսադարեան պատմութիւն թրքահայ բժշկութեան, 1923-1975, Իսթանպուլ, 1975, 121 էջ:

31. Պապոյան Շ., Հարությունյան Ա., Ավագյան Ա., Հայաստանում առողջապահության պատմություն (1828–1965 թթ.), Երևան, 1973, 482 էջ:

32. Փարսադանյան Ռ., Հայաստանի առողջապահության պատմություն (1828-1965 թթ.), Երևան, 1973, 482 էջ:

33. Փարսադանյան Ռ., Սովետական Հայաստանի առողջապահությունը, Երևան, 1967, 26 էջ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԻՆԱՍՅԱՆ